

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուրլոյ ՍՊԸ-ն ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Տեքստուրլոյ ՍՊԸ	Տեքստուրլոյ ՍՊԸ	Համազգեստ՝ Կանացի. Վերնաշապիկ երկարաթև՝ կանացի (2 հատ). մուգ մոխրագույն կտորից՝ 67-70% պոլիէսթեր, 30-33% վիսկոզե բաղադրությամբ, ոչ պակաս 170-180 գր/մ2 խտությամբ: Վերնաշապիկի հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով կոճկվող կափույրով, հետևամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ երկար, 2 կոճակներով կոճկվող թեզանիքներով: Վերնաշապիկի պարանոցից ներքև մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են 3 օղակներ և կարվում 3 կոճակներ՝ 10մմ տրամագծով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, կարվում են տեսչական մարմնի տարբերանշանները (Տե՛ս նկարագրություն 3): Ներքևում՝ կարագծերում, անցկացված է Էլաստիկ ժապավեն: Վերնաշապիկի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, կարվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1), ձախ թևքին, իսկ վերնաշապիկի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև՝ տեսչական մարմնի թևքանշանը (Տե՛ս նկարագրություն 2): Կիսաշրջազգեստ (2 հատ). կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց՝ մուգ մոխրագույն

կտորից՝ 60-65% բամբակ, 35-40% պոլիէսթեր բաղադրությամբ, 240-250 գր/մ2 խտությամբ, ուղիղ կտրվածքով, մինչ ծունկը ծածկող երկարության: Հետևամասի ներքևում 9 սմ բացվածքով, հետևից վերնամասը կոճկվում է 16սմ երկարությամբ շղթայով, որը գոտու վրա կոճկվում է 14 մմ երկարությամբ 1 կոճակ օղակով: Շապիկ կարճաթև՝ կանացի (2 հատ). մոխրագույն կտորից՝ 45-47% բամբակ, 45-47% պոլիէսթեր, 6-10% էլաստան բաղադրությամբ, 220-230 գր/մ2 խտությամբ: Շապիկի հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով՝ 11 սմ տրամագծով կոճկվող կափուկով, թևքերը՝ կարճ, երկակի կարով: Շապիկի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, ասեղնագործվում է է խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1), իսկ ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև ասեղնագործվում է թևքանշանը (Տե՛ս նկարագրություն 2),: Գլխարկ (1 հատ). մուգ մոխրագույն գլխարկ (կեպի), բամբակ 100%, հետևամասում ամրանում է ճարմանդով: Ջրադիմացկուն, բարձրորակ, խիտ գործվածք է: Առաջնամասում ասեղնագործվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1):

Նկարագրություն 1: խորհրդանշան՝ 97 մմ երկարությամբ, 85 մմ լայնությամբ շրջանաձև ոսկեգույն գավազան է, որի վրա ոլորածն պատկերված է կանաչ օձ: Գավազանի ներքևի մասում՝ երկու կողմերում, V-աձև տեղադրված է ոսկեգույն ցորենի մեկական հասկ: Ձախ ցորենի հասկի ստորին մասում ոսկեգույն տառերով գրված է տեսչական մարմնի ռուսերեն հապավումը՝ «ИОБПП РА», իսկ աջ ցորենի հասկի ստորին մասում անգլերեն հապավումը՝ «FSIB of RA»: Արտաքին կանաչ շրջանագծում ոսկեգույն տառերով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» բառերը: Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա:

Նկարագրություն 2: թևքանշան՝ շրջանաձև է, 8 սմ շառավղով, կենտրոնում Հայաստանի Հանրապետության դրոշի եռագույնն է պատկերված, իսկ շրջանագիծն իրենից ներկայացնում է «Հայաստան» գրվածքը՝ հայերեն և

անգլերեն լեզուներով: Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա: Նկարագրություն 3: տեսչական մարմնի տարբերանշան՝ ուղղանկյուն 10x2 սմ երկարությամբ, վերնաշապիկի ձախ կրծքին գրվում է համապատասխան ստորաբաժանման անվանման հապավում տարբերանշանը, իսկ աջ կողմում՝ կրողի անվան առաջին տառը և ազգանունը տարբերանշանը: Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա: Գործվածքի գույներն են՝ կարմիրը, կապույտը, ծիրանագույնը, կանաչը և ոսկեգույնը: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ մատակարարը պարտավոր է Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքներիի նմուշները, 1 օրինակից, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պահանջվող համազգեստի ձևանմուշները ներառված են «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց համազգեստի ձևն ու կրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 13-ի N 1081-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 700-Ն որոշման մեջ: Հրավերով սահմանված պահանջ՝ * Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: * Բոլոր ապրանքները մատակարարվելու են ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում մատակարարի միջոցներով՝ աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն: * Մասնակիցը

			պարտավոր է ներկայացնել ապրանքի ամբողջական նկարագիրը: * Մասնակիցը պարտավոր է Պայմանագիրը կնքվելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի նշած հասցեներում և ժամերին կատարել ապրանքների չափսեր վերցնելու աշխատանքներ: * Ապրանքների չափսերն ու քանակները ենթակա են համաձայնեցման Պատվիրատուի հետ:
--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЧЦ-УЦСУ-ЕЦХЦПФ-26/17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
2			